

**ԱՐԴԵՆ ԿՐԻՔՈՐԻ ՍԵԼԼԵՑՅԱՆ**  
**«Արցախբանկ» ՓԲԸ Խորհրդի Նախագահ**

Ծնվել է 1951թ. սեպտեմբերի 25-ին Ստամբուլում, Թուրքիա:

1970-1975թթ. սովորել է Շվեյցարիայում՝ Լոզանի Տնտեսագիտական Համալսարանում, ունի տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

2000թ.-ից առ այսօր հանդիսանում է Շվեյցարիայի Ժնև քաղաքում գտնվող Frank Muller Group-ի գլխավոր խորհրդատուն:

2002թ.-ից հանդիսանում է «Արցախբանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ: 2017թ. մայիսի 17-ին ընտրվել է «Արցախբանկ» ՓԲԸ Խորհրդի Նախագահ:

Բնակվում է Ժնևում, Շվեյցարիայի Համադաշնություն: Ամուսնացած է, ունի երկու զավակ:

**ԷԴՎԱՐԴ ՄԱՐՏԻՆԻ ՍԱՆԴՈՅԱՆ**  
**«Արցախբանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ**

Ծնվել է 1961 թվականի հունիսի 4-ին ՀՀ Երևան քաղաքում:

1993-1994 թթ.սովորել է Ռուսաստանի Դաշնության Կառավարությանն առընթեր (այժմ՝ ՌԴ Նախագահին առընթեր) Ժողովրդական տնտեսության ակադեմիայի (Մոսկվա) դոկտորանտուրայում: 1983-1987 թթ. սովորել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ասպիրանտուրայում, պաշտպանել գիտական թեզ, 1981-1983թթ.՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում «Մեքենաշինական արդյունաբերության էկոնոմիկա և կազմակերպում» մասնագիտությամբ: 1978-1981թթ. սովորել է Մոսկվայի կառավարման ինստիտուտում «Մեքենաշինական արդյունաբերության կառավարման կազմակերպում» մասնագիտությամբ, 1968-1978թթ. սովորել է Երևանի թիվ 71 միջնակարգ դպրոցում, ավարտել է Ոսկե մեդալով:

1987թ.-ից ԽՍՀՄ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1991թ.-ին ԽՍՀՄ Ժողովրդական կրթության պետական կոմիտեն շնորհել է դոցենտի կոչում: 2001թ. փետրվարի 21 ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի կողմից շնորհվել է Մասնագիտական որակավորման հավաստագիր No 0003 (արժեթղթերի շուկայում մասնագիտական գործունեություն իրականացնելու որակավորում): 2007թ. հունիսի 1-ից՝ Ռուս-Հայկական (Սլավոնական) պետական Համալսարանի պրոֆեսոր: 2008թ. մարտին ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովը շնորհել է Տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: 2008թ. հուլիսին ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովը շնորհել է պրոֆեսորի գիտական կոչում «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2009թ. մայիսին ՌԴ

գիտության և կրթության ոլորտի վերահսկողության դաշնային ծառայության կողմից շնորհվել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

1983-1986թթ. աշխատել է Երևանի պետական պոլիտեխնիկական ինստիտուտում՝ որպես մեքենաշինական արդյունաբերության էկոնոմիկա և կազմակերպում ամբիոնի գիտաշխատող և միաժամանակ Ֆակուլտետի կոմերիտական կազմակերպության քարտուղար: 1986-1988թթ. աշխատել է ԽՍՀՄ էլեկտրատեխնիկական արդյունաբերության նախարարության ճյուղային գիտահետազոտական լաբորատորիայում՝ որպես ավագ գիտաշխատող՝ համատեղելով Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի (ներկայումս՝ Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտ) աշխատանքի էկոնոմիկա և կառավարում ամբիոնի ասիստենտի, այնուհետև՝ դոցենտի պաշտոնները: 1988-1989թթ. հանդիսացել է ՀԿԿ ԿԿ սոցիալ-տնտեսական բաժնին կից տնտեսական բարեփոխումների ռազմավարության մշակման գծով մշտական հանձնաժողովի անդամ:

1988-1991թթ. հանդիսացել է «Մենուա» ԲԲԸ ապահովագրական ընկերություն Նախագահ և «Մասիս» առևտրային բանկ Նախագահի տեղակալ, միաժամանակ զբաղեցնելով Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի (ներկայումս՝ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան) Մեքենաշինական արդյունաբերության էկոնոմիկա և կազմակերպում ամբիոնի դոցենտի պաշտոնը:

1991-1993թթ. զբաղեցրել է ՀՀ հարկային տեսչության պետի տեղակալ – ՀՀ Փոխնախարարի պաշտոնը:

1993թ.-ին նշանակվել է «Արմատոլիտ Սերվիս» ՓԲԸ Նախագահ - «Ալբանկ» առևտրային բանկի Փոխնախագահ, 1994թ.-ից՝ ՀՀ Կենտրոնական բանկի վերահսկողության, կարգավորման և լիցենզավորման գլխավոր վարչության պետ՝ մինչև 1998թ.:

1998-1999թթ. զբաղեցրել է ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի պաշտոնը:

1999–2000թթ. զբաղեցրել է «Հայագրոբանկ» ԲԲԸ Գլխավոր գործադիր տնօրեն, Վարչության նախագահի պաշտոնը:

2000-2002թթ. զբաղեցրել է Հայաստանի Բանկերի Միություն Նախագահի տեղակալի, 2000-2004թթ.՝ Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի աշխատանքի տնտեսագիտության ամբիոնի դոցենտի, 2001-2003թթ.՝ Հայաստանի «Ֆոնդային Բորսա» ԻԿԿ Դիտորդ Խորհրդի նախագահի պաշտոնները:

2003թ. հունիս – 2004թ. մայիս ամիսներին Հայաստանում Կապիտալի շուկաների զարգացման ծրագրի խորհրդական էր (Price water house Coopers (IBM Business Consulting Services – USAID)):

2001թ. սեպտեմբեր – 2004թ. ապրիլ ժամանակահատվածում զբաղեցրել է «Հայինայբանկ» ՓԲԸ Խորհրդի Նախագահի տեղակալի, Ռազմավարական զարգացման կոմիտեի նախագահի, 2004թ. մայիս – 2005թ. փետրվար ժամանակահատվածում՝ «Հայինայբանկ» ՓԲԸ Վարչության նախագահի խորհրդականի, 2004թ. հունիս – 2012թ. մայիս ժամանակահատվածում՝ ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի կրթության զարգացման գծով պրոռեկտորի պաշտոնները:

2002թ. մարտից առ այսօր հանդիսանում է Ռուս-Հայկական (սլավոնական) պետական համալսարանի պրոֆեսոր, Էկոնոմիկայի և ֆինանսների ամբիոնի վարիչ, Համալսարանի Գիտական Խորհրդի անդամ, 2009թ. սեպտեմբերից առ այսօր՝ ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի Բիզնես դպրոցի ղեկավար, 2012թ. մայիսից առ այսօր՝ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի տնտեսագիտության և բիզնեսի ինստիտուտի տնօրեն, ինստիտուտի Գիտական Խորհրդի նախագահ:

34-ամյա մասնագիտական և 26-ամյա գիտամանկավարժական գործունեության ընթացքում Էդվարդ Սանդոյանը մշտապես զբաղվել է երիտասարդ մասնագետների պատրաստմամբ, իր գիտական ղեկավարության ներքո պատրաստվել են 24 տնտեսագիտության թեկնածուներ և 1 տնտեսագիտության դոկտոր, շարունակում է ղեկավարել ասպիրանտների և դոկտորանտների գիտական աշխատանքները: Մասնակցել է ՀՀ բանկային և հարկային օրենսդրության ոլորտը կարգավորող օրենքների և նորմատիվ-իրավական ակտերի զգալի մասի մշակմանը, հանդիսանում է 1994-2003թթ. ՀՀ-ում գործող բանկային կարգավորման եւ վերահսկողության հայեցակարգի հեղինակը: Հանդիսանում է ավելի քան 218 տ.մ. ընդհանուր ծավալով 237 հրատարակված գիտական աշխատությունների, այդ թվում մենագրությունների, դասագրքերի և ուսումնամեթոդական ձեռնարկների, ինչպես նաև ավելի քան 60 օրաթերթային հոդվածների հեղինակ:

1995-1997թթ. ստացել է մասնագիտական որակավորում Քլիվլենդի Ֆեդերալ Ռեզերվ Բանկում (Քլիվլենդ, Օհայո, ԱՄՆ), Անգլիայի Բանկում (Լոնդոն), Ֆրանսիայի Ազգային Բանկում (Փարիզ), Նիդերլանդների Ազգային Բանկում (Ամստերդամ):

Էդվարդ Սանդոյանը հանդիսանում է ՀՀ-ում գործող մի շարք գիտական պարբերական հրատարակությունների խմբագրական խորհրդի անդամ:

Իր գործունեության ընթացքում արժանացել է բազմաթիվ պարգևների և կոչումների:

2017թ. սեպտեմբերի 5-ին նշանակվել է «Արցախբանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ:

Ամուսնացած է, ունի մեկ դուստր:

### **ԱՐՄԵՆ ՌԱԶՄԻԿԻ ԴԱՐԲԻՆՅԱՆ** **«Արցախբանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ**

Ծնվել է 1965թ. հունվարի 23-ին Լենինական քաղաքում (այնուիետև՝ Գյումրի):

1981-1986թթ. սովորել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում, 1986-1989թթ.՝ նույն համալսարանի ասպիրանտուրայում: ԽՍՀՄ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից ստացել է տնտեսագիտության թեկնածուի (1989թ.), ապա՝ ՌԴ ԲՈՀ-ի կողմից (2006թ.)՝ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

Աշխատանքային գործունեությունը սկսել է Մոսկվայի Պետական Համալսարանում՝ դասախոսական աշխատանքից: 1989–1992թթ. աշխատել է ԽՍՀՄ մինիստրների խորհրդին կից Հայաստանի ԽՍՀ մինիստրների խորհրդի մշտական ներկայացուցչությունում (1991թ.-ից սկսած՝ ՌԴ-ում ՀՀ Մշտական ներկայացուցչություն, այնուհետև՝ ՀՀ Դեսպանատուն)՝ որպես տնտեսագիտական վարչության առաջատար մասնագետ, տնտեսական քաղաքականության վարչության պետ: Այդ տարիներին հանդիսացել է ԽՍՀՄ պետական արտաքին պարտքի և ակտիվների խնդիրները կարգավորող Միջպետական հանձնաժողովում ՀՀ լիազոր ներկայացուցիչ:

1992թ.-ին տեղափոխվել է Երևան և ՀՀ Կառավարության որոշմամբ նշանակվել «Արմենինտորգ» պետական արտաքին տնտեսական միավորման գլխավոր տնօրեն:

1994-1999թթ. ՀՀ պետական կառավարման ոլորտում զբաղեցրել է մի շարք ղեկավար պաշտոններ՝ ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընտրվել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի առաջին տեղակալ (պաշտոնավարել է 1994-1997թթ.), այնուհետև ՀՀ Նախագահի հրամանագրերով նշանակվել է ՀՀ ֆինանսների Նախարար (1997թ.), ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի Նախարար (1997-1998 թթ.), ՀՀ Վարչապետ (1998-1999թթ.), ՀՀ էկոնոմիկայի Նախարար (1999-2000թթ.):

2000թ.-ից անցել է գիտամանկավարժական և հասարակական գործունեության: Նույն թվականից հանդիսանում է Հայ-Ռուսական համալսարանի Հոգաբարձուների խորհրդի համանախագահ, իսկ 2001թ.-ից մինչ օրս զբաղեցնում է ռեկտորի պաշտոնը:

2006թ.-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

2011թ.-ին ՀՌՀ գիտական խորհրդի որոշմամբ ստացել է տնտեսագիտություն մասնագիտությամբ պրոֆեսորի գիտական կոչում (հաստատված է ՀՀ ԲՈՀ-ի կողմից):

2017թ. սեպտեմբերի 5-ին նշանակվել է «Արցախբանկ» ՓԲԸ խորհրդի անդամ:

Զբաղվում է քաղաքական և հասարակական գործունեությամբ: Շուրջ 60 գիտական աշխատանքների և մի շարք վերլուծական հոդվածների հեղինակ է:

### **ԼԵՎՈՆ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՂԱԶԱՐՅԱՆ** **«Արցախբանկ» ՓԲԸ խորհրդի անդամ**

Ծնվել է 1969թ. օգոստոսի 12-ին ՀՀ Երևան քաղաքում:

1993թ.-ին ավարտել է Երևանի Պետական Համալսարանը, իսկ 1999թ.-ին՝ Սանկտ-Պետերբուրգի Արտաքին տնտեսական կապերի, տնտեսագիտության և իրավունքի ինստիտուտը:

1994-2004թթ. ծառայել է ՀՀ ուժային կառույցներում:

2004-2007թթ. զբաղեցրել է ղեկավար պաշտոններ ՀՀ ԿԱ Մաքսային Պետական Կոմիտեում:  
2011թ. հունիսից նշանակվել է «Ֆրանկ Մյուլլեր Ուոչլանդ» ԲԸ Երևանի մասնաճյուղի տնօրենի

խորհրդատու, իսկ 2012թ. հունվարի 9-ից՝ համատեղության կարգով «ՍիրԿապ Արմենիա» ՓԲԸ Երևանի մասնաճյուղի Ադմինիստրատիվ ղեկավար:

2012թ. սեպտեմբերի 15-ին «Արցախբանկ» ՓԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում ընտրվել է «Արցախբանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:

### **ԱՐԹՈՒՐ ՀԱԿՈՒԻ ՕՍԻԿՅԱՆ** **«Արցախբանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ**

Ծնվել է 1973 թվականի հուլիսի 25-ին ՀՀ Երևան քաղաքում: 1990-1995թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում՝ իրավագիտություն մասնագիտությամբ: 1996-2000թթ. հանդիսացել է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրայի հայցորդ: 2000 թվականին շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1997-1999թթ. սովորել է Հայաստանի ամերիկյան համալսարանում՝ ստանալով իրավագիտության մագիստրոսի կոչում: 1998-1999թթ. ուսանել է ԱՄՆ Կալիֆոռնիայի Բերկլիի համալսարանի իրավագիտության դպրոցում:

1995-1999թթ. աշխատել է ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում՝ նախ որպես մասնագետ, այնուհետև որպես խորհրդատու: 1997-2014թթ. դասավանդել է Երևանի պետական համալսարանում: 1999թ. մայիսից մինչև 2001թ. հունվարը աշխատել է ՀՀ գլխավոր դատախազությունում՝ որպես զինվորական դատախազի օգնական: 2001-2003թթ. զբաղեցրել է ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետի, 2003-2008թթ.՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի տեղակալի պաշտոնները: 2008թ. սեպտեմբերի 11-ին ՀՀ վարչապետի որոշմամբ նշանակվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ: 2009 թվականի օգոստոսի 26-ից սեպտեմբերի 9-ը զբաղեցրել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնը: 2009 թվականի սեպտեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ ոստիկանության պետի տեղակալ: 2014 թվականի սեպտեմբերի 3-ից մինչև 2018 թվականի հունվարի 28-ը զբաղեցրել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի պաշտոնը:

2002-2006թթ. հանդիսացել է ՀՀ հանրային ոլորտի բարեփոխումների հանձնաժողովի անդամ:

2006-2018թթ. հանդիսացել է GRECO-ում (Եվրոպայի խորհուրդ) Հայաստանի պատվիրակության ղեկավար: 2018 թվականի հունիսից մինչև 2018 թվականի օգոստոսը հանդիսացել է Երևանի պետական համալսարանի Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի ավագ փորձագետ:

2003 թվականին շնորհվել է ՀՀ հարկային ծառայության առաջին աստիճանի խորհրդականի կոչում, 2009 թվականին՝ ՀՀ ոստիկանության գնդապետի կոչում: 2011թ. սեպտեմբերի 3-ին

Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով շնորհվել է ոստիկանության գեներալ-մայորի կոչում:

2006 թվականին պարգևատրվել է ՀՀ վարչապետի հուշամեդալով:

2018թ. դեկտեմբերի 11-ից հանդիսանում է «Արցախբանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ:

Հեղինակ է 25 գիտական հոդվածների և երկու հրատարակությունների:

Ամուսնացած է, ունի երկու որդի և մեկ դուստր: